533 Սովորեցրո՛ւ ինձ, Աստված, Քեզ փառաբանել,

1. Սովորեցրո՛ւ ինձ, Աստված, Քեզ փառաբանել,
Սովորեցրո՛ւ ինձ, Տեր իմ, Քեզ աղոթել,
Սովորեցրո՛ւ, Տեր իմ, Քո կամքը կատարել,
Ուժ տուր, որ կարողանամ Քեզ ծառայել:

2. Տո՛ւր, որ մեղքի լուծը իմ վրայից թոթափեմ,
Տո՛ւր, որ սիրտս Քո առաջ լացով բացեմ,
Տո՛ւր, որ ես այս կյանքում սրբության մեջ ապրեմ,
Օգնի՛ր, որ քայլերս դեպի Քեզ ուղղեմ:

3. Առանց Քեզ ես ոչինչ եմ, ինչպես մի որդը,
Առանց Քեզ տխուր է անցնում իմ կյանքը,
Առանց Քեզ, Տե՛ր իմ, ինձ կծածկի խավարը,
Իմ խեղճ հոգուն կպարուրի դժոխքը:

4. Ո՞վ Հիսուս, իմ սիրելի՛, ողորմի՛ր Դու ինձ,
Ո՞վ Արարիչ, գթա՛ խեղճ արարածիս,
Ո՞վ Փրկիչ, ինձ փրկի՛ր գեհենի կրակից,
Իմ բժի՛շկ, ազատի՛ր ինձ իմ վերքերից:

5. Հոգևոր բժշկությանդ ես կարոտ եմ,
Ապաշխարում եմ, մաքրի՛ր ինձ մեղքերից,
Օ՜, լսիր ինձ, Տեր Աստված, դռներիդ մոտ եմ,
Ողորմի՛ր ինձ, որպեսզի ես չկորչեմ: